# ԻՆ՞Չ Է ԱՍՈՒՄ ԱՍՏՎԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Ընտանիքի Կարևորությունը
Մաս 2

*«Ինչ որ ուզում եք, որ մարդիկ անեն ձեզ, դուք էլ նույնը արեք նրանց:»* Ղուկաս 6:31

## Ի՞նչ է Ասում Աստված Զավակներին

*«Որդինե՛ր, հնազա՛նդ եղեք ձեր ծնողներին Տիրոջով, քանի որ սա է ճիշտը: «Պատվի՛ր քո հորն ու մորը,- սա է առաջին պատվիրանը, որն ուղեկցվում է փոխհատուցման խոստումով,- որպեսզի բարիք գտնես ու երկրի վրա երկար ապրես:»* Եփեսացիս 6:1-3

## Ի՞նչ է Ասում Աստված Ծնողներին

### 1- Մի բարկացնեք ձեր զավակներին

*«Հայրեր, մի բարկացնեք ձեր որդկանցը:»* Եփեսացիս 6:4ա

### Ի՞նչն է բարկացնում զավակներին

- Անորոշ սահմաններ
- Անկանխատեսելի կարգապահություն
- Չհավասարակշռված քննադատություն
- Անխոհեմ պահանջներ
- Չասված սպասելիքներ
- Անարժան կամ չլուծված բարկություն

### 2- Կրթե՛ք ձեր զավակներին

*«...այլ մեծացրեք նրանց խրատով և Տիրոջ ուսմունքովը:»* Եփեսացիս 6:4բ

*«Սրանք մի քիչ ժամանակ իրանց հաճո երեվեցածի պես խրատում էին, բայց նա՝ օգտի համար, որ նրա սրբությունն ընդունենք: Եվ ամեն խրատ հենց նույն ժամանակին ուրախություն չի երեվում, այլ տրտմություն. բայց հետո նրանով վարժվածներին արդար խաղաղության պտուղ է վճարում:»* Եբրայեցիս 12:10-11

### 3- Սնուցեք ձեր զավակներին

- Սեր նշանակում է առաջնորդել

*«Բայց որոնք որ նրան ընդունեցին, իշխանություն տվավ նրանց Աստծո որդիներ լինելու՝ նրանց, որ նրա անունին հավատում են:»* Հովհաննես 1:12

- Սեր նշանակում է աղոթել

*«Բայց ես քավ լիցի, որ Տիրոջ դեմ մեղք գործեմ, ձեզ համար աղոթք անելուց դադարելով:»* Ա Թագավորաց 12:23

- Սեր նշանակում է աճել

*«Իմ որդյակներ, որ ձեզ կրկին ծնում եմ ցավով, մինչև որ Քրիստոսը կերպարանվի ձեզանում:»* Գաղատացիս 4:19

*«Այս իմ խոսքերը ձեր սրտի և հոգիի մեջ դրեք...և ձեր տղայոցը սովորեցրեք նրանք որ նրանցից խոսես տանդ նստած ժամանակդ, և ճանապարհ գնացած ժամանակդ և պառկելու և վեր կենալու ժամանակդ:»* Օրինաց 11:18-19

### 4- Կարեկցություն ցույց տվեք ձեր զավակներին

*«Իրար հետ քաղցր եղեք, գթած՝ իրար ներելով, ինչպես Աստված էլ Քրիստոսով ձեզ ներեց:»* Եփեսացիս 4:32

*«Ինչպես որ հայրը կ'գթա որդիներին, այնպես գթած է Տերը իրանից վախեցողներին:»* Սաղմոս 103:13

*«Հավատքով Մովսեսը երբոր ծնվեցավ՝ երեք ամիս թաքուն պահվեցավ իր ծնողի ձեռովը.»* Եբրայեցիս 11:23

*«...այլ հավատքը որ սիրով գործում էր:»* Գաղատացիս 5:6բ

Հաջորդ Կիրակի

ԱՄԵՆ ՄԱՐԴ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Հովիվ Սարօ Խաչիկեան